ՀՐԱՄԱՆ N 23-

2023-2024 ուստարվա ձմեռային շրջանում կրթահամալիրի կրթական օբյեկտների ջերմամեկուսացման և ջեռուցման նախապատրաստական աշխատանքներն ավարտելու մասին

17.10.2023թ.

Կրթահամալիրի կրթական օբյեկտներում 2023-2024-ի ջեռուցման շրջանը սկսելու համար.

1. հանձնարարել Էդիկ Սարիբեկյանին, դպրոցների, քոլեջի ղեկավարներին՝ մինչև ս.թ. նոյեմբերի 1-ը կազմել կրթական օբյեկտների ձմռան նախապատրաստման աշխատանքների ցանկը և ժամանակացույցը, այն հաշվով, որ այդ աշխատանքները հիմնականում ավարտվեն մինչև նոյեմբերի 6-ը.
2. մինչև նոյեմբերի 6-ը ավարտել.
   - կրթական օբյեկտների ջերմամեկուսացման աշխատանքները.
   - դասարաններում, աշխատասենյակներում, ուսումնական այլ տարածքներում լուսամուտների-դռների բռնակների, փականների, հանդերձարանների կախիչների վերանորոգումը-տեղադրումը.
   - արտաքին կոյուղիների ցանցի վերականգնման, նկուղների անվտանգության, լուսավորության աշխատանքները.
   - գլխավոր մուտքերի ճանապարհների բարելավման աշխատանքները.
   - տանիքների նորոգման (կաթոցների վերացման) աշխատանքները.
   - կրթական օբյեկտների էլեկտրական ջեռուցիչների ստուգման, վերանորոգման աշխատանքները.

- կրթական օբյեկտների կաթսայատները ավելորդ իրերից ազատելը, կաթսայատներում անվտանգության տեսուչի հայտնաբերած թերությունները վերացնելը.
- կրթական օբյեկտների կաթսայատների, ջեռուցման ցանցերի ստուգման և փորձարկման աշխատանքները.

3. կատարված աշխատանքների արդյունքով կազմել կից ներկայացվող նմուշի ակտեր (հավելված 1), դրանք հրապարակել մինչև նոյեմբերի 7-ը.
4. կաթսայատները գործարկել՝ ելնելով անհրաժեշտությունից, ապահովելով շենքերում 18^0-20^0C տաքություն: Մինչև նոյեմբերի 6-ը գործող ուսումնական տարածքներում սահմանված ջերմաստիճանն ապահովել էլեկտրական ջեռակներով.
5. կրթական օբյեկտների ջեռուցման աշխատակարգերը, սույն հրամանի պահանջների հաշվառմամբ, սահմանում են կրթական օբյեկտների ղեկավարները (հավելված 2).
6. կրթահամալիրի փոխտնօրեն Էդիկ Սարիբեկյանին ճանաչել կրթական օբյեկտների կաթսայատների անվտանգ շահագործման պատասխանատու.
7. հաստատել կրթական օբյեկտների անվտանգ ու անընդհատ ջեռուցման ցանցի սպասարկման համար պատասխանատուների և կաթսայատների հնոցապանների ցուցակը (հավելված 3).
8. հանձնարարել Էդիկ Սարիբեկյանին մինչև ս.թ. նոյեմբերի 6-ը յուրաքանչյուր կրթական օբյեկտ ապահովել ջեռուցման տեխնիկական սպասարկման, ջերմամեկուսացման, ձյուն մաքրելու համար պակասող պիտույքներով և գործիքներով.
9. դպրոցների ղեկավարներին՝ նոյեմբերի 1-ից սկսած, ամեն օր սահմանված կարգով գրանցել.
    - կրթական օբյեկտի սպառած էլեկտրաէներգիայի, գազի, ջրի ծախսերը,

- կրթական օբյեկտի օգտագործվող տարածքների՝ միջանցքների, խմբասենյակների, դասասենյակների, ուսումնական այլ տարածքների ջերմաստիճանը.

10. հրամանում նշված անձանց հրամանին ծանոթացնել անհատապես, իսկ կրթահամալիրի աշխատողներին և սովորողներին՝ կայքի միջոցով:

Կրթահամալիրի տնօրեն՝ Ս. Մարկոսյան

Հավելված 1

Հաստատում եմ

Կրթահամալիրի տնօրեն՝ Ս. Մարկոսյան

ԱԿՏ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ուսումնասիրեցինք … կրթական օբյեկտի (հասցեն՝ ….) կաթսայատան ջեռուցման սարքերի վիճակը, փորձարկեցինք դրանք, ուսումնասիրեցինք ջեռուցման ներքին ցանցի բոլոր հանգույցները, փորձարկեցինք ջեռուցման ներքին ցանցը:

- Կաթսայատունն ունի պահանջվող մաքրություն, չկան ավելորդ իրեր:
- Կաթսայատանը տեղադրված են կրակմարիչները և անհրաժեշտ բոլոր պիտույքները:
- Կաթսայատան սարքերն անթերի աշխատում են, ջեռուցման ներքին ցանցը վնասված չէ, ջեռուցման մարտկոցները, խողովակները ջուր չեն թողնում:
- Հնոցապանն ունի աշխատելու թույլտվություն:

- Դպրոցում առկա են կրթահամալիրի տնօրենի հրամանի կատարումն ապահովող պայմաններ:

Դիտողություններ և առաջարկներ՝

Կազմեցին՝

Պատասխանատու՝ Է. Սարիբեկյան

Կրթական օբյեկտի ղեկավար՝

Կաթսայատան շահագործող՝

Ջեռուցման ցանցի սպասարկման պատասխանատու՝ Է. Գավարյան

Ամիս, ամսաթիվ

Հավելված 2

Կրթական օբյեկտի ղեկավար,
կրթական օբյեկտում ջեռուցման աշխատակարգ սահմանող պատասխանատու անձ

- Արևելյան դպրոց-պարտեզ (հասցեն՝ Ա. Բաբաջանյան 47/1) - Նառա Նիկողոսյան
- Արևմտյան դպրոց-պարտեզ (հասցեն՝ Ա. Բաբաջանյան 38/1) – Գոհար Բալջյան
- Հյուսիսային դպրոց-պարտեզ (հասցեն՝ Ռաֆֆու 69/1) - Քնարիկ Ներսիսյան
- Հարավային դպրոց-պարտեզ (հասցեն՝ Ծ. Իսակովի 52/6) - Շամիրամ Պողոսյան
- Մայր դպրոց (հասցեն՝ Ա. Բաբաջանյան 25) - Մարթա Ասատրյան, Լուսինե Բուշ
- Քոլեջ (հասցեն՝ Զ. Անդրանիկի 52/6) - Տաթև Բլեյան

- Մեդիակենտրոն (հասցեն՝ Ռաֆֆու 57) - Լիլիթ Ազիզխանյան
- Ագարակ (հասցեն՝ Ա. Բաբաջանյան 38/2) – Միքաել Գաբրիելյան
- Արատեսի դպրական կենտրոն – Էդգար Մեժլումյան

Հավելված 3

Կրթական օբյեկտների ջեռուցման ցանցերի անխափան աշխատանքի սպասարկման պատասխանատուների ցուցակ

1. Կաթսայատների էլեկտրական աշխատանքների սպասարկում – Մկրտիչ Ղազարյան
2. Կոյուղիների արտաքին ցանցերի սպասարկում - Էդուարդ Գավարյան
3. Կրթական օբյեկտների ջեռուցման ցանցում արտակարգ պատահարների վերացում - Էդուարդ Գավարյան

Կրթական օբյեկտների կաթսայատների շահագործման պատասխանատուներ

1. Արևելյան դպրոց-պարտեզ - Արմեն Վարպետյան
2. Արևմտյան դպրոց-պարտեզ - Ժիրայր Միքայելյան
3. Հյուսիսային դպրոց-պարտեզ - Արմայիս Վարդանյան
4. Հիմնական դպրոց-պարտեզ - Համլետ Կարապետյան
5. Քոլեջ – Գեննադի Վարյան
6. Մայր դպրոց - Վլադիկ Աբրահամյան, Մանուկ Բաբայան
7. Մեդիակենտրոն – Սիրուշ Տեր-Միլիտոսյան